

Ի. ԱԲՈԽԱՉԵ

ՆՈՐ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ ՎՐԱՑ ԵՎ ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՆՑՅԱԼՈՒՄ

(16—17-րդ դդ.)

Մեղ հասած գրական ազգյուրների համաձայն, վրաց և հայոց գրա-

կան հարաբերությունների զարգացմանը կարելի է հետեւ 5-րդ դարից:

Արդեն նշել ենք մեկ անգամ¹, որ վրաց և հայոց գրական հարաբերությունների զարգացման մեջ մի քանի փուլ է նկատվում: Առաջին փուլը
ընդգրկում է 5—8-րդ դարերը: Այդ շրջանում վրաց և հայոց գրական հա-
րաբերություններին նպաստում է գավանական միասնությունը: Իսկ այդ
հարաբերությունների գործողության ասպարեզն է հանդիսանում մեծ
մասամբ Հայաստանի սահմանակից այսպես կոչված «Ստորին Քարթլի»
հարավարելյան գավառը:

Երկրորդ փուլը ընդգրկում է 9—10-րդ դարերը: Այս շրջանում
գավանական միասնությունը, բայց արդեն հայության մի մասի հետ
միայն, գրական հարաբերության համար նույնագես նպաստավոր հանգա-
մանք էր հանդիսանում: Այն վայրը, որտեղ ստեղծագործական աշխատանք
էր տարվում, մեծ մասամբ Վրաստանի հարավարելյան Տառ (հայերեն՝
Տայք) գավառն էր:

Հիշյալ փուլը բնորոշվում է և նրանով, որ նրա ընթացքում գրական
հարաբերություն է նկատվում նաև Վրաստանի և Հայաստանի սահման-
ներից դուրս գտնվող հայոց և վրաց կուլտուրական օջախների միջև, այն է
Երուսաղեմում գործող հայ գրական շրջանի և վրաց ականավոր կուլտու-
րական այնպիսի կենտրոնի միջև, ինչպիսին էր Պաղեստինի վրաց վանա-
կան գաղութը:

Երրորդ փուլը համընկնում է Վրաստանի տառնձին գավառների
միավորման և նրա պետական միության ու հզորության գարաշրջանին՝
11—13-րդ դդ.: Այս շրջանի գրական հարաբերությունների աշխատաց-
մանը գլխավորապես նպաստում էին զարձյալ գավանարանորեն վրաց հետ
կապված հայկական այն վանքերը, որոնք գտնվում էին վրաց պետության
սահմաններում և հիմնականում տարածված էին Սպասարքներին պատկանող
հայկական հոգերի վրա: Նրանց նախաձեռնությամբ հայկական գրականու-

¹ Իլ. Արուելաձե, Վրաց և հայոց գրական հարաբերությունները 9—10-րդ դարերում,
հետազոտություն և բնադրեր: Վրացական ՍՍԾ ԳԱ, հրատ. (վրացերեն), Թբիլիսի, 1944 թ.,
էջ 01—018:

թյունը, ի դեմս վրացերենից կատարված թարգմանությունների, այս ժամանակամիջոցում ծանոթացավ այնպիսի հուշարձանների հետ, ինչպիսիք են Հովհաննես Պետրիծու, Պրոկլ Դիագոսոսի և Հովհաննես Դամառկացու Փիլիսոփայական երկերը¹, որոնցից մի քանիսը, միջին դարերի ուշ ժամանակներում ես ուսում ստանալու համար պարտադիր դասագրքերից էին համարվում։ Վրացական պետության կազմի մեջ գտնվելու և վրաց ժողովրդի հետ քաղաքական և կուլտուրական կապերի ամրացման շնորհիվ հայ ժողովուրդը պահանջ է զգում ծանոթանալու եղբայրական վրաց ժողովրդի անցյալի հետ։ Այդ պահանջի արդյունքն է հանդիսանում «Քարթիս Յիսովրերայի» հին հայկական համառոտ թարգմանությունը²։

Վրաց և հայ գրական հարաբերությունների զարգացման նոր, չորրորդ փուլը մինչև օրերս 18-րդ դարն էր համարվում, բայց ինչպես հիմա է պարզվում, հիշյալ փուլը միայն այդ դարով չի սահմանափակվում։ Ինչպես պիտի ցույց տանք, կան այնպիսի փաստաթղթեր, որոնք վկայում են այն մասին, որ այդ 4-րդ փուլը սկսվում է դեռ 16—17-րդ դարերից

18-րդ դարի վրաց մեծ գործիչներ Վախտանգ VI-ը, Սուլիսան Սարա Օրբելիանին, Անտոն I-ը, Վախուշտի Բագրատիոնին և ուրիշները հայկական կուլտուրայի հետ, մասնավորապես գրականության բնագավառում։ Մերձավոր ծանոթություն են ունեցել և հաճախ ընդօրինակել կամ երրեցն, Սարայի խոսքերով ասած, նմանվել են նրա նմուշներին։ Դրա համար էլ հիշյալ գործիչները սերտ հարաբերություն են ստեղծել հայ կուլտուրական գործիչների հետ։ Հիշենք թեկուղ Վախտանգ VI-ի և նրա որդու Վախուշտու մերձավոր աշխատակից Զուրար Շանշովանիին, որին արքան և արքայորդին հանձնարարում են հայերենից վրացերեն թարգմանել մի քանի փիլիսոփայական և քերականական երկերը³, որոնք նրանց կողմից խմբագրական շտկումներից հետո լույս են ընծայվում։ Այսուղ չենք կարող չիշել և Փիլիպոս Ղայթմազաշվիլուն, որի օգնությամբ Անտոն I-ը վրացերենի է թարգմանում Նոր-Զուղայի և Վենետիկի հայկական դպրոցներում մշակված, այսպես կոչված, ազատ գիտությունների դասագրքերը, ինչպիսիք են Սիմեոն Զուղայեցու Տրամարանությունը, Մխիթար Սերաստացու Ճարտասանությունը, Տրամարանությունը, Քերականությունը և այլն։ Քարթլիախեթում այն ժամանակ բացված սեմինարիաների համար անհրաժեշտ դասագրքերի մի մասը, մինչ Ռուսաստանի կուլտուրական կենտրոնների հետ անմիջական կապ հաստատելը, այդ դպրոցների վարիչները հայերենից էին ընդօրինակում կամ էլ ստեղծում էին բառ հայկական նմուշների։

Իր հերթին, հայ գործիչները, եթե վրաց գրականության որևէ մի

¹ Իւ. Արուլաձե, Ռուսթավելու գարաշըանի վրաց գրականության արձագանքները հայ գրականության մեջ, «Տեղեկագիր ՍՍԾՄ Գիտությունների ակադեմիայի հայկական Փիլիսոլի», № 8 (22), 1942, էջ 3—16։

² Իւ. Արուլաձե, Քարթլիս Ցխովրերայի կամ վրաց պատմության հին հայերեն թարգմանությունը, «Հայկական ՍՍԾՄ Ժողկոմսովետին կից Պետական Զեռադրատան (Մատենադարանի) գիտական նյութերի ժողովածու», № 1, Երևան, 1941, էջ 31—40։

³ Իւ. Արուլաձե, Վրաց հին քերականական դրականության հին հուշարձանները. 1. Զուրար Շանշովանի, «Վրաստանի պետական թանգարանի Տեղեկագիր», 1940 թ., X Բ., էջ 141—159։

հուշարձան գրավում էր նրանց ուշագրությունը, բնդօրինակում կամ թարգմանում էին այն, և այդպիսով մատչելի էին դարձնում այդ հուշարձանը ընթերցող հայ շրջանների համար:

Հին դրական աղքյուրները, որոնք պահպաժ են հայկական ձեռագրերի գրատանոցներում և առանձնապես մեզ համար մատչելի Երեանի ձեռագրատան մեջ (Մատենագրաբանում), այնպիսի նորանոր փաստաթղթեր են գնում մեր տրամադրության տակ, որոնք ակնհայտնի վկայում են անցյալի վրաց և հայոց դրական սերտ կապերի մասին:

Այսպիսի նոր փասթաթղթերից մեկը, որ հայկական փոքրածավալ ձեռագրի 3-թերթյան պատառիկ է ներկայացնում (Մատենագրաբանի ձեռագիր, № 9144, հնում՝ պատառիկ № 880), հազորգում է, որ բնդօրինակված աշխատությունը «թարգմանեցեալ ի ֆրանկաց վրացիք և մեք ի վրացոց ի հայ լեզու գրեցաք»:

Այս խոսքերը արտադրողի ձեռքով են գրված. նախորդում են մեր պատառիկի վրա զետեղված գրքի գլուխներից մեկին, որի վերնադիրն է «Գլուխ երրորդ, առակաց որոշու ճանաչի ի վերայ ձեռաց ամենայնի ըստ խւրաքանչիւր»:

Գլուխ այդ վերնադիրից պարզ կերպով երևում է, որ այդ աշխատությունը վերաբերում է աստղերին և այն էլ ձեռքի կապակցությամբ։ Այսպիսի բովանդակություն ունեցող երկ իսկապես կա վրացերենում, մեր ձեռագրերի հավաքածուների մեջ. այն սովորաբար կրում է «ԵԶԵԾԸԾՈՒՅՈՒՆ»—ախտաբառ կամ «ԵԶԵԾՈՒՅՈՒՆ»՝ «Ճեռնազննություն» անունը։ Մեզ հասած ձեռագրերը մեծ մասամբ 18-րդ դարին են պատկանում, սակայն ինքը երկը այս դարից տուած է ծագել. Այդ մասին տեղեկությունը է պահպանում 19-րդ դարի մի բան սխալ լինի, ներեցնք: 1875 թվին, հունվարի 11-ին ավարտվեց՝ (Վրաստանի պետական թանգարանի ձեռագրիր №-46, էջ 271):

«Այս փիլիսոփայական գիրքը արտագրեցի ես, Դավիթ Իվան Ամիրիձե, Օրբելիանների սարդարի բնտանիքի տնտեսը, հին, երեք հարյուր վեց տարվա ձեռագիր գրքից, որը սրա բնագիրն էր. Քրոնիկոնն է այսպիսի՝ ԱՅՑ (ՄՆՁ). Սրա բնագիրը արտագրված է. այդ Քրոնիկոնի հաշվով Քրիստոսից հետո 1569 թվին, Եթե որևէ մի բան սխալ լինի, ներեցնք: 1875 թվին, հունվարի 11-ին ավարտվեց» (Վրաստանի պետական թանգարանի ձեռագրիր №-46, էջ 271):

Եվ իսկապես, հուշարձանի լեզուն ևս հաստատում է Ամիրիձեի հիշա-

տակարանի ճշտությունը։ Նրա թարգմանությունը ավելի վաղ կատարված

լինել չի կարող։ Նախընթաց որևէ դարում նրան տեղադրելը կհակասեր

հուշարձանի լեզվին ու ոճին։

«ԵԶԵԾԸԾՈՒՅՈՒՆ» (Ախտաբառ) կամ «ԵԶԵԾՈՒՅՈՒՆ» (Զեռնազննությունը) տատղարաշխական երկ է։ Նա պատմում է դիսավոր աստղերի կամ լուսատուների մասին, նրանց գիրքի, շարժման և «աղուրձերի» կամ կենդանակերպերի անցման մասին, ինչպես և ձեռնազննության և այս կամ այն աստղի տակ ծնված անձանց վերագրված հատկությունների մասին։ Աստղագիտության կամ աստղաբաշխության այս ձեռնարկը հետաքրքիր որոշ նյութ է պարունակում մեզանում բնագիտության մտքի զարգացման պատմության ուսումնասիրման համար։ Նրա լիտերատար գնահատումը, իհարկե, այդ գի-

տության պատմաբանի գործն է։ Մենք այստեղ բավականանանք միայն նշելով այն, որ վրացերեն լեզվով աստղագիտական ընույթ կրող մի այլ երկ ևս գոյություն ունի. վերջինս ընդօրինակված է 1188 թվականին և պահպում է Վրաստանի պետական թանգարանում (ձեռագիր Ա-65):

Վրաց աղբյուրի և նրանից բխող հայերեն թարգմանության մասին որոշ դադարիար տալու համար, ստորև վրացերենին առընթեր բերում ենք մեր պատառիկի հայկական տեքստից մի հատված:

თავი მესამე: ეტლები. თუ როგორ
უნდა შევიტყოთ კაცის ხელზედან
მისნი ნაქნარი საჭმენი.

ესე არს მართალი და კეშმარიტი ეტლთა-ცოდინარობა, რომელი მართალნი(!) ვარსკვლავთ მრიცხველთა, ფილასოფოსთა და მუნაჯიბთ დაუმტკიცებიათ. და ჩვენ აქამდი ეტლებზე გვილაპარაკნია და ნივთებზე მისთვის, რომ რაც დაბადებულნი არიან, ოთხის ნივთისაგან არიან და ამ ეტლებზე დაბადებულან. ღმერთი გვიბ[რ]ძანებს საღმრთო წერილის პირველს თავში: იხილა ღმერთმან და თქვა, რამეთუ ყოველი კეთილ. და ღმრთის-მეტყველნიც იტყვიან: ყოველთ დაბადებულთ ბუნება ცუდად არ შექნა. ესეც უნდა ვიცოდეთ, რომ ღმრთის გარდა და სულიერთ გარდა ყოველ ფერში ხანდისხან ტყუილნი გამოჩენდების, ვითარცა იტყვის წინა-სწარმეტყველი დავით: მევთქვი, უფალო, განკვირვებასა ჩემსა, რამეთუ ყოველი კაცი ცრუ არს. მარტო ღმერთს მოუხდების სიმართლე და ღმრთის მეტყველების გარდა არა იქნება, რომ ცოტაც არი, ტყუილი არ გამოჩენდეს. მისთვის ყოველი კაცი სრულიად ვერ მიხვდების. აწ არა თუ ცოდნას ვამტკიცებ, არამედ კაცის ვერ მიხდომასა. ყოველს ცოდინარობაზე ძნელი არის ხელის გასინჯვა და შეტყობა, რომელსა ეწოდების მუნაჯიბურის ენით კირომანცია. ჯერ უნდა სრული ვისწავლოთ, რაცა სწერია, რომ არ გავმტყუვნდეთ ცოდნაში.

Դլուխ երկորդ, աստեղաց. որպէս
ճանաչի ի վերայ ձեռաց ամենայնի
բայ իւրաքանչիւր:

Արդ եկայք, ընտրեսցուք զառոյքն
և զՃշմարիտն աստղագիտութեան,
որ և հմուտ աստղաբաշխերն և
փիլիսոփայք և մունաճիպներն
հաստատեալ են. Եւ մեք ևս վասն
այն մինչեւ ցաստի խօսեցաք և գր-
րեցաք լի ի վերայ տարերաց և
աստեղաց, որ զամենայն ինչ որ
արարեալ կան այս Դ. տարերացու է և
ի ձեռուայս աստեղացու է, որպէս հրա-
մայէ Մօգսէս ի յԱստուածաշունչն,
առաջին գլուխն և ԱԱ. համարն՝ Եւ
ետես աստուած զամենայն զոր արար,
և ահա բարի են յոյժ: Եւս վկայեն
աստուածարանքն ամենայն ստեղ-
ծուածոց ընութեաննն/ /¹ ան ոչ արար:
/ / / / / / /¹ ատացուք, զի աստուած մի-
այն է ճշմարիտ և հոգեղէն, եթէ ոչ
յամենայն ինչ սղալութիւն կու գտա-
նի, որպէս հրամայէ մարգարէն Դա-
ւիթ ծմել. սաղմոսին Բ. համարն՝
ևս ասացի ի զարմանալ իմում, թէ
ամենայն մարդ ստասաց իցէ: Վասն
այնորիկ արդար է աստուած և ար-
դարութիւն և ստուգութիւն աստու-
ծոյ վայել է: Դարձեալ ստուգու-
թիւն աստուածարանիցն, եթէ ոչ
այլոց իմաստնոյն չի լինիք, որ ստ-
կաւ մի սղալութիւն չանցնի: Վասն
այն ամենայն մարդ կատարեալ ով
կարէ հուսանիլ: Արդ, ոչ եթէ ի մէջ
իմաստութեան կայ սղալանք, այլ ի
մէջ իմաստնոց, որ զիւրեանք կատա-
րեալ չեն կարեր հասուցաներ այն
գործոյն: Քանզի քան զամենայն
իմաստութիւն գժուարագոյն է ձե-
ռաց ձանաչումն, յորում իմաստա-
ռէր[թ] կոչեն կիրօմանցիայ, կատա-
րեալ ուսանիլ, զոր ինչ գրեալ կայ,
որ չըսդա / / / / / / / / / / / / իմք¹:

¹ *Juglans regia* L. var. *orientalis* Benth.

Եթե չունենայինք հայերեն թարգմանության այդ պատառինի սկզբում գտնվող տվյալը այն մասին, որ այդ գիրքը թարգմանված է վրացերեն՝ ֆրանկաց լեզվից (այսինքն լատիներենից) և հայերենն էլ իր հերթին թարգմանված է վրացերենից, ապա իրար համեմատելով վրացերեն և հայերեն տեքստերը, կարող էինք հաստատել այդ բնագրերի միջև դոյություն ունեցող որոշ կապը, ոչ այնքան բառացի համապատասխանությամբ (ինչ որ միշտ չի նկատվում), որքան հատուկ գարձիւածքների և օտար տերմինների համապատասխանությամբ։ Օրինակ «մահուալ» და Յեթարություն յըլլուա-ցուցունարունաց գարձիւածքը թարգմանված է հայերեն «ստոյք և ճշմարիտ աստղագիտութիւն» գարձիւածքով։ «Յահացազլազտ-մհրուցեցելու», գիլիսոփայք և մունա-ճիպներն հաստատեալ են։ «Կոցելու ցուցունարունաց մեջու օրու եղանակ գա-նչցա დա Յեթյունա, հոմելսա յթուցեցու մենաչունու յենու յորում յիմաստասէր[ք] կոչեն կիրումանցիայ։ „Եածո—խաղ”, „մշտարու—մուշթար”, „Յոհալու—զօհալ»։ „Ուժարուցու—օտարիգ»։

Եկրիւած օրինակներում բոլոր բառերն ու տերմինները համընկնում են իրար։ Դժվար կլիներ, անշուշտ, այդ փոքրածավալ տեքստի սահմաններում որոշել, թե որն է բնագիրը և որը թարգմանություն։ Հենց դրա համար էլ շատ տրժեքավոր է մեզ համար հիշյալ հայկական տեղեկությունը, որը հայտնի կերպով հայերեն թարգմանության համար վրացերեն սկզբնագիր է մատնանշում, իսկ վերջինիս ծագումը դնում է ֆրանկաց լեզվից, այսինքն լատիներենից։

Որ լատիներենից է առաջանում վրացերեն բնագիրը, այդ պարզվում է վրացերեն գրքի առաջին տողերից։

Ըստ Հայուսու Յոհաննեցուցու-
տացան, ուղ յացու հոմելս յըլլուաց დա-
օձացեցա։

Ի՞մօճա օօծ ծ[ր]ծանցէն, համելու
յոհաննեցու յացու Յեթյունաց տացուսաց
եղանակ տացուսու յոհույրու սայմե, հասաց
ոյն։ Ես ի՞մօճա օօծուսացան ոյմուլու,
დա յոհուսուտացան յամուցալու-
ցուլու յացու ցուցունարունա, հոմելսա
ի՞մօճա լատօնուրաց յոհումանցուա։
[Q-867, 1ւ.]

Պարզ է, որ լատիներեն կիրումանցիայի հիշտատակումը պատահա-
կան չէ։

Ե՞րբ պիտի թարգմանված լինի վրացերենից հայերեն վերոհիշյալ
աստղաբաշխական գիրքը։ Հայկական պատառիկը գրա մասին բան չի
տառւմ։ Ինքը հայկական ձեռագիրը ըստ գրչության 18-րդ դարին է պատ-
կանում։ Պարզ է, որ նա այս ժամանակից հետո չէր կարող թարգման-
ված լինել, ոչ էլ 16-րդ դարից առաջ, որովհետեւ, ինչպես տեսանք, այդ
գարում է ծագել վրաց թարգմանությունը։ Կարելի է ենթագրել որ
հայկական թարգմանությունը 17-րդ դարին է պատկանում։ այդ ենթա-
գրությանը չեն հակասում և լեզվի տվյալները։

[«Սկզբն առաջին, փիլիսոփա-
ներից թե մարդ որ ասողի վրա
է ծնվում։

Սուրբ Հովիր ասում է, որ ամեն
մարդու ձեռքի վրա ճանաչվում է
նրա արած դործը, ինչ որ արել է։
Այս է սուրբ Հովիրից ասում և փի-
լիսոփաներից հայտնված դիտու-
թյունը, որը լատիներեն կոչվում է
կիրումանցիա։】

Այսպիսով պարզվում է, որ ոչ վաղ քան 16-րդ դարը լատիներենից վրացերեն են թարգմանել առաջի աշխարհական այդ գիրքը՝ «Ախտաբարքը», որից (այսինքն վրացերենից) հետագայում, հավանաբար 17-րդ դարում, կատարել են հայելուկան թարգմանությունը:

Վրաց ու հայոց գրական հին կապերի մասին վկայող երկրորդ փաստաթուղթը բժշկական այն գիրքն է, որ կոչվում է «կարաբաղին» կամ հայերեն «ախրապատին»:

Մինչև օրս մենք գիտենք երկու տեսակի վրացերեն «կարաբաղին»՝ բնդարձակ և համառոտ: Եվ մեկը և մյուսը հրատարակված են: Բնդարձակ կարաբաղինը, որի երկրորդ մասը 1950 թվականին է լույս տեսել¹ Զազա Փանակերտելու անվան հետ է կապված, և կազմվել է 15-րդ դարի վերջին: Երա մեջ համաձայնված են այդ ժամանակ վրացերեն լեզվով գոյություն ունեցող բոլոր կարաբաղինները: Համառոտ խմբագրության, կամ այսպես կոչված «մինչ-զազայան» կարաբաղիններից մեկը, «անդուգական կարաբաղինի» վերնագրով հրատարակվել է բժիշկ Լ. Կոտետիշվիլու խմբագրությամբ²:

Վրացերեն կարաբաղինի այն տեսակը, որ ավելի էր տարուծված՝ միջնադարյան վրացական բժշկագիտության մեջ, աննկատելի չեւ մնացել և հայ բժշկական գրականության կողմից: Ինչպես ստորև ցույց կարվի, մեզ հասել է այդ հուշարձանի հայկական թարգմանությունը Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից պետական ձեռագրատանը (Մատենադարանում) պահպող 17-րդ դարի մի բնդօրինակությամբ:

Հիշյալ հայկական ձեռագրիը Մատենագարանում գրանցված է № 412-ի տակ: Ձեռագիրը մեծածավալ է և բավանդակությամբ հարուստ: Նա բազկացած է 242 թերթից (32×25 սմ), գրված է թղթի վրա, երկայուն (25×7 սմ), այսպես կոչված նոտր գրչությամբ: Էջը միջին հաշվով 24 տող է պարունակում: Վերնագիրները՝ կարմրագույն, իսկ տեքստը ու թանաքով է պրված: Ձեռագրի վերջում, ուր սովորաբար զետեղված է լինում «Հիշյատակարանը», որում, ըստ սովորության, սպասելի էր դանել, ի միջի այլոց, և ձեռագրի գրչության ժամանակի մասին տեղեկություն, թերթերի անկուժով պակասում է: Այդ սպատճառով ձեռագրի ծագման ժամանակը սահմանել կարելի է միայն պալեոգրաֆիական հատկանիշներով: Մասնաւուները և նրանց թվում առաջին հերթին հայկական ձեռագրերի նկարագրություն Մեորուղ Տեր-Մովսիսյանը, իրեն ձեռագրի գրչության թվականը նշունաւում էն 17-րդ դարը:

Ձեռագիրը երեք մասից է բաղկացած: Առաջինը (2ր—18ր) կոչվում է «Թեղերոյ զաւրութիւն», երկրորդը (22ա—95ա)³՝ «Առաջին ախրապատին», իսկ երրորդը (95ր—242ր) կրում է «Երկրորդ ախրապատին» վերնագիրը: Ախրապատինի կազմովը ամեն մի մասի նախագրել է առանձին ցանկ, որտեղ թվարկել է ավյալ մասի մեջ մտնող գլուխները:

Ախրապատինի գլուխները երկու մասերի բովանդակությունը ցույց

¹ Զազա Փանակերտելի, Բժշկական գիրք (կարաբաղին), «Սաքմեղզամ», Թբիլիսի, 1950 թ. (վրացերեն):

² «Անդուգական կարաբաղին», բնագիրը մշակեց և տառչարանը գրեց բժիշկ Լ. Կոտետիշվիլի, Թբիլիսի, 1940 թ. (վրացերեն):

տալու համար ստորև տալիս ենք դրանց ցանկերը: Ինչպես սկսած տեսնենք, այդ ախրապատինը վրացերենից է թարգմանված հայերեն և այդ հարաբերությունը ցույց տալու նպատակով, թեկուղ մասամբ, հայկական ցանկերի կողքին զետեղում ենք նրանց համապատասխան վրացերենը, որը հանում ենք վերոհիշյալ «Անդուգական կտրաբաղին»-ից:

Յանկ գրոջս, որ կոչի ախրապատին

ա. Թէ որպէս պարտ է հաքիմին գնալ վերոյ հիւանդին:

բ. Ճանաչելն և տեսնելն կարութին:

գ. Նշանն առողջութեան և տեսնութին:

դ. Երեսի գոյնի ճանաչելն, թէ որպէս է:

ե. Գոյնզգոյն երազ տեսնութինդին:

զ. Բորհանն, որ մտնու մարդ:

է. Շունչն, որ չկարենայ առնուր:

ը. Տարոյ ճանաչումն և ամսոյ:

թ. Յոդուածքն, որ խաղաք:

ժ. Քանի ցաւ կայ, որ ճար չի լինի:

ժա. Դեղ վեր առնելուն:

ժբ. Այլիի դեղ առնելուն:

ժգ. Մանր գեղերուն առնուլն:

ժդ. Այսրիճներ բաց առնելու:

ժե. Մատրուխներու:

ժղ. Խուզներու:

ժէ. Հապերու:

ժը. Դուրսերու:

ժթ. Տլաք տաքութենի:

ի. Մաճուներու և դուրիլներու և իտրիփիլներու:

իա. Թրիաքներու:

իբ. Շարպաթներու:

իդ. Սքանզուրիներու և լերդի:

իդ. Ժամանակն բաժանած վերայ մարդոյ:

իե. Ցխրօն, որ է...

իգ. Կին, որ չյղանայ և հայզին:

իէ. Որ դժուար բերէ:

իը. Զըսվ Բ. հոգսութիւն:

իթ. Ծննդեան երախայի:

ա. Օյօմօնցան Սեղուլօսա թոշութեցա հացահաց շնճա.

ծ. Ցեტպայեծ գա նաեցա պովլօսա ցը- րօսա ցարուլօսա.

ց. Նոშանո ցանցալօսա.

ց. Նոშանո ցնոծօսատցու գա Ցե- պանօսատցու.

ց. Նոშանո, հռմց Սեղուլո ցըրաց- ցըրացսա սոնմահսա նաեցուցես.

ց. Նոშանո, հօ Ցուրանսա Ցեցուցես ցացո.

ց. Սուլս հռմց ցըր օսուլտվմուցես.

ց. Ցըլութագտա ցնոծօսա.

ց. ցացս հռմց ասոցծո ցմլցրուցես.

ց. հաստցնո Սյնո առ ցնցուցես ցացս.

ց. Ցամլցեծու օլցեծօսա.

ց. Օձ.

ց. Ցըրուլու ցամլցեծօսա.

ց. օարաչցեծու ցանցելունցօսա.

ց. Օց.

ց. Օն.

ց. Կորհուցեծօսա.

ց. Սուցես Ցլցուցեծօսա.

ց. Հ.

ց. Ց.

ց. Ցարծատցեծօսա.

ց. Սոյանցուցեծօսա գա լցուցլուն- ցու.

ց. Ցը.

ց. Աթրո.

ց. Ըցըացացու հռմց օր օառհուլց- ցես գա Ցըսօսա.

ց. Հռմց մելուագ Ցոնցուցես.

ց. Ցըլուտ որսուլունցօսա.

ց. Կոմացցու ցանցուցես.

Ե. Կնոջ, որ անզաւակ լինին ասում:
Թ. Վասն հայտին կնոջ:
Իր. Հայտին ևտ ընկնելուն:
Իդ. Կաթն, որ պատսի կնոջն:
Իդ. Զաւկատանն որ ուսուց հա-
ռլ լինին:

Իե. Խոթինա, որ կառեն, որ զաւ-
կատանն կուլի:

Իդ. Մարգոյ, որ այրութիւնն պա-
կաս լինի և չկարենայ կնոջ մօտ
պառկի:

Ցանկ երկրորդ ախրապատինիս

Ա. Ամենայն գլխոյ ցաւին, բրու-
ին, որ է թաւքէգուն, որ է սարսամն,
շակիկին և անքնութենին, որ հի-
ւանդութեան մէջն և ծերութեան
մէջն կու հանդիպի, ամէնն այս
դանումս գրած է:

Բ. Մալախուլային և նշանն նորին:
Գ. Սարին և սաքթին:

Դ. Ֆալիճի, լաղուին, բաշին և թա-
շանուճին:

Ե. Ամենայն աչից ցաւին:

Զ. Ամենայն ականջացաւին:

Է. Ամենայն քնթի ցաւին և քըն-
թումն, որ բաւասիլ դուրս գայ,
խարբուխին և քնթէն, որ արիւն ըլի
գնում, փոնդալուն և ևտ ձգելուն:

Ը. Երեսին, պլռնդներուն, ակ-
ուաքներուն և լեզուին և կզակին:

Թ. Բգին, սասին, խախին, մալա-
զին, խունազին և բգէն, որ արիւն
ըլի գալիս, և ձայնի ներս ընկնե-
լուն. ուրիշ բգացաւին դուրսն, որ
ցաւում ըլի:

Ժ. Տղրուկին, որ ջրի խմելոյն
հետն ներս մտնու:

Ճա. Հաղին և զիղինաֆաղին, թո-
քին ուսեցքին, զօշին կրծոցն և
որին, որ թոքի խոցին կասեն:

Ճր. Բստամոքսին, բղկալուն, հեծ-
կըլտալուն և այիղին, որ կերակուր
բացխում ըլի:

Ը. Ջեզայացսա շնչուլոնծա և վի-
մոծըցէս.

Ծա. Ջեզատա წյեսօսա.

Ծծ. წյեսօսա շյշացոմօսա.

Ծջ. Ջեզայացսա հօյ ջայլութեօ-
ցէս.

Ծդ. Տամոծոսա Շօցան ու Տօմսօցնց
գայմահոտուն.

Ծյ. Օտոնացո հոմց չշշօան Տամոսա.

Ծզ. Կացո հոմ Չոլութան Յըր ջա-
յլութեօցէս Տյենօսացան.

Ծ. Կոշլու գյուրու տացու Ծյօցօ-
լուն, ծրուսա, տացյեցուն, Շազուցուն
დա շմուլոնծուն, հոմց ացացց ուժաՇո-
ցա դա Տօմերշոցա գայմահոտուն,
շյշելա ամա կարշոցա Ելյերուա.

Ծ. Ցանաեցլուն դա Ցուսո նոՇանո.

Ծ. Տարուսո դա Տյշդասո.

Ծ. Գուլցենչուն, լայցասա, Համասա,
դա Տասանչուն.

Ծ. Ռազալու Ծյօցօլուն.

Ծ. Կոշուրուն դա Կոշուրութատ հոմց
ծոցասորու ցամոցուցէս, Սյուրօնսա դա
Կոշուրութատ հոմց Տօնելու Տօնուցէս,
դա Կոշուրուն դա Շյշացունցէս.

Ծ. Ցորուսո, Ցագուսո, Ցնուլու դա
Ենօսո դա Կնուսո.

Ծ. Կյելուսո, Եանուսո դա Ցալանուսո,
Եննացուսո դա Կյելուցալման հոմց Տօ-
նելու Օմուսօնուցէս դա Եմօսա հաւցլ-
ուսո. Տեցաց Կյելու Ծյօցօլուն, Ցա-
րցու հոմց Տըյուուցէս.

Ծ. Բյուրծլուսո հոմց Բյուլու Տմասա
Շօցա հածուլուցէս.

Ծա. Եցելուսո դա Ցու-նացանուսո,
Ցուրնցուսո Տօմսօցնուսո, Ցյուրուսո դա
Տօլուսո, հոմց Ցուրնցուսո Բյուլուլսա
չշշօան.

Ծօ. Տըոմայուսո, Ցուրնուսո, Տըուցուն-
ուսո դա Անծասո, հոմց Տակամանուսո
Ժամյացընացան.

Ծօ. Տըոմայուսո, Ցուրնուսո, Տըուցուն-
ուսո դա Անծասո, հոմց Տակամանուսո
Ժամյացընացան.

Ժդ. Սրտին և սրտի պարկելուն:
Ժդ. Լերդին և վարամին, որ ու-
ղեցքին կառեն:

Ժե. Սիսխին, դիզին և եարադա-
նին:

Ժդ. Փայծղան ցաւուն:

Ժէ. Սիտջին, որ լուծելն:

Ժը. Դուլինջին և ջաշին, որ թո-
քըն է:

Ժթ. Պօլօճիլին, որ է երիկա-
մունքն և քանթելին, որ է...

Ի. Բուշտուն և շիրիմին:

Իա. Ամօթին, և պլորին ցաւին և
աղեքներն, որ պլորումն դէվայր գայ:

Իր. Նստոյ տեղին, բաւասիրին,
շուղաղին և քոր գալուն:

Իդ. Ճիճոնցն Գ. գոյնին:

Իդ. Եարադանին և մաֆասիլին և
միկրիսին:

Իհ. Նոր ըսկսուված գլխոյ մազիցն
մինչև ստի ըդունկն մարդոյ դսոփից
ինչ ցաւ կու հանդիպի:

Իդ. Երեսի գոյնի պահելուն:

Իէ. Բաղին և բարասին:

Իր. Խոցերուն դռուց, որ դռու
տայ կամ դռւրս գայ:

Իթ. Պինդ ուսնեցին:

Լ. Շլնքի ցաւուն:

Լա. Ուսաղլխի ցաւուն:

Լի. Գոզն, որ անկամ դնում ըլի
կամ վաղում:

Լդ. Կառլածին և ընկածին:

Լդ. Այլածին և վայր թափածին
եղիին:

Լի. Անձնումն, որ քամի ծննանի:

Լդ. Փոխելույն:

Լէ. Շաղկին և մահ տարաժամին:

Լլ. Անձնումն, որ ուսնեցք լուս ընկ-
նի:

Լթ. Խորտի տակն, որ հոտում ըլի
և սաներն:

Լի. Խաղիրին, որ միջի տակն
(վայրն) թուլանայ:

Օզ. Ցոլուսա და Ցոլուս წցուսա.

ՕԾ. Ըզօծլուսա და Յարամուսա, հոմց
Տօմսոցնեսա Ֆյցուան.

Օյ. Տօսենսա, Ըուցուսա და Պարապա-
նուսա.

Օց. Ծյուրձուսա Ծյուզուլուսա.

Օճ. Տաշուսա და Կցանուսա.

ՕԾ. Հոլոնջուսա და Հաթասո, հոմց
Ծործոց արուս.

ՕԾ. Տորչմելու და Քանտելուսա.

Հ. ՑուՄტուսա და Ցորոմուսա.

Հա. Տարծեցենցուսա, Կցերուս Ծյուզո-
լուսա და նաწլեցնո հոմց Կցերմոցան
համուցուցըն.

Հծ. Մյանասա Կարուսա, Ցոვասուրուսա
და Ցոյպացուսա და Քացուլուսա.

ՀՃ. Ցոյեծուսա Տամոցը Ծյերուսա.

ՀԾ. Արյանօսա და Ցուցասլուսա და
Ցոյրուսուսա.

ՀԵ. Եալու დասաწյուսո თացու, տմուտ
շորեթ Ծյերեսա Ծրիենուլեթամდე, ՀաՅ
ցալս գարցտ Տենո დայմահուցեծուս.

ՀՑ. Ցորուսա Ցյենացուսա.

ՀՃ. Ցայսա და Ցարասուսա.

ՀԾ. Ցունցուսա ցարցուսա ցարցուսա.

ՀԾ. Ցագրուսա Տացրուսա Տացրուսա.
ՀԾ. Ցունցուսա Տացրուսա Տացրուսա.

խա. Գառու ֆիլին և դաւալին:

խր. Կրնկունքն և ձեռքն և սոքն,
որ ճղքտուի:

խդ. Նետի և փշի հանելին:

խդ. Գիրութենին և լաղառութե-
նին:

խե. Դեղածի դեզ:

խդ. Օձերուն կծելուն, մօրիալին և
կարճին և սողնոց և կատաղած շանն:

խէ. Երակի բաց անելուն, հաճա-
մաթին և տղրուկին:

խր. Բաղնիսն լեղանալուն:

խթ. Ոչիլ, որ մազումն և միր-
քումն ծնանի:

ծ. Քնելուն և արթուն կենալուն:

ծա. Կերակրին թթուի և քաղց-
րին:

ծբ. Հանդերձին:

ծգ. Նոր տուն գնելուն:

ծդ. Չիթերոյ շինել:

ծե. Խառլիաթն ձկոն և մոխն:

ծգ. Խառլիաթն կաթնին:

ծէ. Սերմերոյ խառլիաթն:

ծը. Պարտեզոնց խառլիաթն:

ծթ. Գէճ և չոր մրգերուն:

ի. Քաղցրունց և շաքրոտներունց:

կա. Գինուն և ջրին:

կր. Մէնակ դեղերուն:

Բերդած համեմատական նյութից կարելի է միայն մի եղբակացու-
թյան գալ, այն է՝ հայերեն բնագիրը կախում ունի վրացերենից: Այս-
պիսի հարաբերությունը պարզ կերպով երեսում է գրքի երկու մասերի
ցանկերի համեմատությունից, առանձնապես երկրորդ մասի ցանկից, որը
բառացի համընկնում է վրացերենին:

Հայերենի կախումը վրացերենից պարզ զգացվում է այն տեղերից,
որոնք թարգմանության ժամանակ լիակատար ճշտությումը արտահայտում
էն վրացական բնագրի ոչ միայն բառերի խմասուր, այլև նրանց կառուց-
վածքի առանձնահատկությունները: Այդ նկատվում է նաև որոշ տերմին-
ների առապարձության անփոփոխ կիրառմամբ:

Առաջին գեղքի օրինակներից է գրքի առաջին մասի 28-րդ գլուխ
վերնագիրը—«Ծցլութ որևսողոծա», որ հայերենում այսպես է փոխադրված՝
«Զրով երկուհոգառութիւն»: Այսուղ բառ առ բառ, այսինքն կալկայի միջա-

մա. Ծաղլ գոլուսա და Ծազալ-
ուսա.

մծ. Ջուսլուսա და ხել-ցենուսա დա-
նցույնուսա.

մց. օսրուս პօրուսա და ցէլուս ցամո-
լցօնուսա.

մց. Տօմէլուսա დա Տօմէլյէնուսա.

մց. Թոթամլուլուսա წամալո.

մծ. Ցցըլըօնուս ցցնուսա და Ցօնո
წամալո, Թորուալուսա და Լրուան-
ցալուսա, Ջցըթժրոմտա და Ցհանօնուս
ძալլուսա.

մծ. Ժարլցու ցածսնուսա, Կոթունուսա
და Շուրծլուսա.

մց. Օձանուս ձանուսա.

մտ. Շոլո հոմ տմասա და Ցցըրժո
ցաօձագուս.

մն. Ըօլուսա დա Ըօնօօլուսա.

մն. Տայմելու Ցյազետա დա Ծյօնոլ-
տա.

մն. Շանօսամուստա.

մց. Ածլաճ Ծասածլցըօնուսա.

մն. Ցցույնուսա Շյընա.

մն. Եասօատո Եցցնու დա Եորցու.

մց. Ռծօս Եասօատո,

մն. Եցըլցըօնուս Եասօատո.

մց. Ցուսցընցըլու Եասօատո,

մո. Ածլուսա დա Եմըլուսա Եոլուսա.

մն. Ծյօնուսա დա Շայրօնանտա.

մն. Ըզօնուսա դա Ցյոլուսա.

մն. Մարթո Շամլցըօնուսա.

ցով ստացված է բոլորովին նոր բառ, որը հայկական բառապաշտիքի մեջ այդ ձևով չի նկատված (բառարանների մեջ հիշվում է միայն «երկու հոդասնալ» և այն իրու բարբառային): Հայերեն տեքստի վրացերենից կախված լինելու լավագույն օրինակ է հանդիսանում և զբքի երկրորդ մասի 13-րդ գլխի վերնադիբը — «Ճշլուս զա Ճշլուս Վցօսա», որը այսպես է թարգմանված «սրբին և սրտի պարկելուն»: Սրանից երեսում է, որ «Ճշլուս Վցա» (= սրտի այրել) իրու «Ճշլուս Վոլուս» («սրտի պառկել», Վոլու: Վցելու — (Ըստ) Վցա — պառկել) հասկանալն ու թարգմանելը հնարավոր է միայն վրացերենից թարգմանելու զետքում և ոչ ընդհակառակը:

Երկրորդի, այսինքն վրացերեն տերմինների անփոփոխ փոխադրման կամ տառապարձության օրինակներ են — 1. Տասա: Տասօսա — սասին. 2. Եածա: Եածօսա — խախին. 3. Ջանություն: Ջանություն — քանթելին. 4. Ցորուածություն: Ցորուածություն — մորիալին. 5. Աշեղու — ցխրօն և այլն:

Գաղափար կազմելու համար, թե ինչ հատկություններով է օժաված հայերեն թարգմանությունը, այստեղ զուգահեռարար բերում ենք «կարարադին»-ի երկրորդ զբքի 10-րդ գլխի վրացերեն բնադիբը և հայերեն թարգմանությունը:

Օ յահո, հոմեց Վյլուսա Սմա՛նցա Վյ-
հելելո հաձյուղուց, մօսօ նօ՛նոն
Մյօ՛նցա.

Վյալո օյնեծօս, հոմեց Վյրուլո Վյ-
հելելո օսեց, յացո ձորճալմա Վյալո-
սա Եցամս և հաձյուցեծօս. օմա նօ՛նուտա
Մյօ՛նցուցօս, հոմեց եմա հացարուցօս և
եածա Վյալո գաղարուցօս և պյուլուցօլմա
Սոսելսա գոյցուց, ան Վյուցուցօս և
սոսելո օմոցուցուցօս ձորուտ և Սակմյ-
լու Յոհաս Վամց.

Ձաս յեց յնճա: Ձորուլմա գաաֆցոնոն
և ձորու գայլրոնոն և ոյրոմթյու-
ցլուսա Վյրուլո և ցրմցլո մարֆյեն
հոմեց արուս, օսօ հայպացուտ և մոյո-
ցետ օմա Վյհելելսա. Հոցորուացա մոյո-
ցոն, մոյքորոն յարցադ, հոմեց յը-
ցոյնոս, նյուտյ Վյհելելսա և տացօս
մացոյրադ մունիցուց և Վյնարադ և
եցրեօնադ մունիցուց, ասրց հոմեց
առ մոյլաց, մանցօ համեց
գարիեծօս Մօցա.

Եց յերցա նածո և յերցա մարֆյեն
մոյուցու, օուլո եարճուլո գանացու և

Դուռն և նշան, որ մարդ Չրի
խմելու հետն տղրուկ մտնու և այ-
նոր գեղն և զօրութիւնն:

Տղրուկ, որ մարդոյ պողապն մտնու
Չրի հետ, այնոր նշանն յիմացիր:

Չուր կու լինի հանց, որ մէջն
մանր տղրուկ լինի նստած. և մարդ,
որ բերանն ի վայր ջուր խմէ, այ-
նոր հետն կու մտնու ներս: Այս
նշանովս յիմացիր, որ ձայնն ներս
կու ընկնի և պողապն այրել կու
բոկսէ, և բգիցն արիւն լինի թքում
կամ կարմիր արիւն լինի վեր գալիս
բերանիցն և կերակուր չկարենայ
ուտել:

Այնորն զայս արա. բերանն ի
վեր պառկեցուր, և բերանն բաց
արա, և սոկերինի բարակ և երկայն
մարծուխն, որ է..., ներս տար և
կալցուր այն տղրուկին: Երբ կալցնես,
հուտ տուր լաւ, որ ցաւի, չըլինի
թէ տղրուկին գլուխն կարես, հան-
գարդ և շնորքով պոկէ հանց, որ
շապանես. թէ կու սպանես մանկի
կու մնայ մէջն:

Թէ ոչ տեսնուս և ոչ մարծուխն,
որ է . . . կալցնես. առ խարդալ

ժմրուտա ցաշրուց და մօտա լարլարա այնեցինք, Կոტա նօშագուր დանապէ, წյլուտա ցալեսէ და պալթեდա Շեսցեց. თუ արա ամոցուցէ, մոնու չահառլու და ժմրուտա ցալեսէ დա մօտա լարլարա այնեցինք. Մերմե մոնու եածուսա დա կաձրուսա წվենո დա Կոტա ժմահուց ցաշրուց, մօտացա լարլարա այնեցինք. თუ արլա ամուտ ոյնաս, Կոტա և ոնու չո, Կոტա մըոցցո დանապէ որուց დա յրտմաներտսա ցաշրուց, წյլուտա ցալեսէ դա Շեսցո. თუ արլա ամուտ ոյնաս, ածանութուցա ածանք, ածոյ հոմե պալթամդո հաջցեց დօդսա եանսա. Մերմե նորմուցա ցոցո წյալո დաօցցնուս, ցամոցա.

Մերմե հոցորհացա წյուհելո ցամոցուցէ դա սուսելո արա ճասწյցուցէ დա յուցուց սցուուցէ, ամա წամլցծուտա լարլարա այնեցինք. մոնու Ծյզծուլուսա დա մյացուսա ծրովյեշլուսա յերշո, ցուլնարո, սամყո, ոտեսց დանապէ, ուսուցա ժմրուտա ցաշրուց. մօտացա լարլարա այնեցինք, თუ աման ար շմցելուս, დաօշուրց ծածրապաթյունուս լածա დա եմցլո ոա, დանապան დա օմա լածաթոցա ցաշրուոն ԿոՏա յալու დըգուս հոյցու դա մօտա ցուլուսեմու დաշնուլոն. თუ աման ար շմցելուս, այօրուս ուշելուսա նետո დա օուս նետո յրտմաներտմոցա ցաշրուց დա ցեղելո չշլածուց Շոցա ցաշրուց դա Շեսցուտ.

თუ ամա սենմոցա մըցըլո Շեցրցուտ ժյոնցուցէ, մոնու յասոնուսա წվենո ատո դրամո, Շորուծութիւն ատո դրամո, եօարո Շամձրուսա ցուլո, յրտմաներտմոցա ցաշրուց յասոնուսա წվենուտա լարլարա այնեցինք դա սակալուա դ յերուսա սակմու Շեյրուցուտ.

თუ պալթոցա համե დաշիարուս, ցծա անյ ժամու, մօսո վամալո յեց արուս, հոմե մոնու ծրութուսա եորլու դա ածրեթյունուս մըցըդուտա մոածո Շոյանց դա մացրած Շեյար, դա մերմե մոյց, հոմե հանտյաս. դա հոցորհացա հանտյաս, წյնարած ամոնցուց, դա յուցուց

ծեծած և քացխով շաղուէ և դարպարայ անէ. քիչ մի նիշագուր ծեծէ, ջրով լոսէ և բգին վերայ օծէ: Թէ չդուրս դայ, առ չարհուտ և քացխով լոսէ և այնով դարպարայ անել տուր. ետոյ առ սոխի և քապարի ջուր և քիչ մի ապ խառնէ և քիչ քացախ այլ խառնէ և դարպարայ տուր. Թէ և ոչ այդով լինի, քիչ մի սոնիմ, քիչ մի խարդալ ծեծէ և միատեղ խառնէ, ջրով լոսէ և խրմեցուր: Թէ և ոչ այդով լինի, բազնիքն լեղցուր հանց, որ մինչեւ րուգն մէջն նոտի շատ ժամ. ետոյ բերնումն պաղ ջուր բանէ և դի վեր կու դայ:

Ետոյ որ տպրուկն վեր դայ և դուրս դայ և արիւնն չկարի և այլի դալիս լինի, այս գեղերովս դարպարայ անել տուր: Առ քաղցը և թրթու նոան կլեպ, գուլնար, սամզ, ծեծէ, քացխով խառնէ և դարպարայ անէ, օգտէ: Թէ այս չօգտէ, առնէ դաղտիկուուի զուզապ և չոր մանուշակ, ծեծէ և այն լուզապումն խառնէ և քիչ աղչկայ մօր կաթն և այնոր սրտի բոլորքն առնէ: Թէ այս չօգտէ, առ դրդմի սերմն, ձէթ և մանուշակի ձէթ, միմիանց մէջն խառնէ և շերմն ջուլալ այլ մէջն խառնէ և խմեցուր:

Թէ այս ցաւիս մէջն փարն կապ ունենայ, առ քանոյ ջուր Փ. դրամ, սրխիշտ Փ. դրամ՝ խիարչամպարի մէջ միմիանց մէջն խառնէ և քանոյ ջրով դարպարայ անէ և կերակուր գարոյ կերակուր կարգէ, օգտէ աստուծով:

Թէ բգումն իրք մնայ, փխայ, որ է . . . , կամ ոսկոր, այնոր դեղն այս է. առ տաւարի միս և տպրումի թելով կապէ ամուր մէջտեղն, և տուր որ կուլ տայ: Երբ կուլ տայ, հանգարտ դի վեր քարշէ, և այլի կուլ տալ տուր, և այլի դի վեր

հաճույքանուն և ամոնտաց, մասնամասն յեն, հոմեր ամոնուն անց հաջողական վայրէ դաստիարակությունների մասին:

Դա վայրէ առաջ և ամոնուն անց հաջողական վայրէ դաստիարակությունների մասին:

Քարշէ, այնչափ արա, որ մինչեւ հանէ և կամ վայր տանէ, և այդ է:

Սուրբն Յակոբ և սուրբն Վլատիկ Հրամայեն...

(2եւ, № 442, 139 թ — 140 թ)

Թարգմանությունը հարազատ է, բայ առ բայ հետեւմ է վրացերեն բնագրին: Թարգմանիչը մտանագետ է:

Հաշվի առնելով իր թարգմանած բնագրի գործնական նշանակությունը, որպես բժշկական երկ, մեր թարգմանիչը մեծ զգուշությամբ և պատասխանատվության զգացմունքով է մոտեցել իր գործին: Եթե չհաշվենք մի քանի ակամա սպրդած սխալները՝ թարգմանությունը կատարված է ձեզրիտ:

Թարգմանիչի մտանագետ լինելը երեւմ է, առաջին հերթին նրանից, որ նա հնում գործածված բժշկական տերմինները, որոնք վրացերեննում և հայերենում տարածված էին արաբերեն ու պարսկերեն գրականության շնորհիվ, այն ձեռվ է գործածում, ինչ ձեռվ նրանք յուրացված էին հին հայկական բժշկական գրականության մեջ: Եթե թարգմանիչ մտանագետի համար անծանոթ լիներ հին հայկական բժշկական գրականությունը, այն գեղքում նա հիշյալ տերմինները կներկայացներ, անշուշտ, վրացերենի ձեռվ:

Որ հայ թարգմանիչը թարգմանելու համար ընտրած նյութի փոխադրման ժամանակ ձգտել է հարազատ մնալ բնագրին, այդ երեւմ է նաև նրանից, որ վրացերեն աղբյուրի գուտ վրացերեն բժշկական տերմինները, վերաբերելիս լինեն նրանք անառողմիային, բժշկական բույսերին, գեղերին, գործիքներին, թե մյուս նման հարցերի: տառաղարձարար է փոխադրում և կողքին դնում է կամ բացտարական խոսքեր (ինչպես օրինակ՝ ցխրոյ, որ է ջերմն) կոմ էլ ազատ տեղ է բաց թողնում այն նպատակով, որ հետագայում, համապատասխան տերմին կտնելուց հետո լրացնի:

Զննելով հայկական թարգմանության լեզուն, նկատում ենք, որ այն սգրաբար», այսինքն հին հայկական գրական լեզու չէ: Այդ լեզուն միջին տեղ է բռնում աշխարհաբարի և միջին հայերենի միջեւ: Կրում է որոշ հատկանիշներ ինչպես աշխարհաբարի, նույնպես էլ միջին հայերենի:

Եկրված հատվածի մեջ չենք հանդիպում ուղիղ խնդրի՝ հայցական հոլովի համար բնորոշ զնախղիքը, որը գերես գործածության մեջ էր միջին հայերենում, բայց բացակայում է նոր գրական լեզվում: Ամեն տեղ գործածված է նոր հայերենին հատուկ ներդոյական հոլովը, որը այստեղ, մի կողմից ունի-ումն վերջավորությունը, իսկ մյուս կողմից, կազմված է արականի վրա մեջ ետագրության համարմամբ: Արա հետ միասին բացառական հոլովը սիստեմատիկորեն գործածված է առանց ոից նախղրի, ինչ որ հատուկ է նոր հայերենի համար: Նոր հայերենի համար է բնորոշ և պատճառական բայերի հրամայական եղանակի ձեռում-ցուր վերջավորության գործածությունը եղակիում (օր. պառկեցուր, կալցուր, խմեցուր...), մի երեսոյթ, որ սովորական է սույն թարգմանության մեջ, բայց հաղվագյուտ է միջին հայերենում:

վերը մեջ բերված հասկածում միջին հայերենին բնորոշ հատկանիշներից են. 1. Ներկա կազմելու համար ամենութեք կու մասնիկի գործածությունը (օր. կու լինի, կու մտնու, կու ընկնի, կու ըսկոէ, կու սպանես, կու մնայ); 2. Հինհայ երենի. անել և հետագայինել վերջավորությունունեցող բայերինուլ վերջավորության անցնելը (օր. մտանել→մտնել→մտնուլ—մտնում, թքանել→թք[ն]ել→թք[ն]ուլ—թքում, տեսանել→տեսնել→տեսնուլ—տեսնում); 3. Յուցական այն դերանվան սեռական-տրականում այնոր ձեի գործածությունը և այլն...¹:

Ինչպես վերը տասցինք, ձեռագիրը թվագրվում է 17-րդ դարով, ուրեմն այն հայերենը, որով կատարված է թարգմանությունը, այդ դարից ուշ չպետք է լինի: Ըստ վերոհիշյալ հատկանիշների, քննարկվող բնագիրը թարգմանված պետք է լինի 16—17-րդ դարերում:

Այսպիսով, վրաց հին բժշկական գրականության մեջ բավական տարածված բժշկության վրա մի տեսակը, որը հայտնի էր «Կարաբաղինի» անունով, 16—17-րդ դարերում թարգմանվել է վրացերեն հայերեն, ինչ որ հաստատվում է վրացերեն և հայերեն գրքերի բնագրային համագրությամբ և քննությամբ:

Վրաց և հայոց գրական հարաբերությունների հիշյալ արդասիքները տվյալ դեպքում՝ վրացերենից հայերեն թարգմանված աստղաբաշխական և բժշկական գրքերը, ինքնըստինքյան հետաքրքիր երկեր լինելով, մեծ նշանակություն ունեն նաև վրաց և հայոց բանասիրության համար: Անցյալի ժառանգությունը ուսումնասիրելու և, հարկավոր դեպքում, յուրացնելու ժամանակ, եթե հայ կամ վրաց գիտության մեջ վերը նշված հուշարձանները ուշադրություն գրավեն, երկու լեզուներով պահպանված այդ բնագրերը չի կարելի ուսումնասիրել անջտա մեկը մյուսից: Այդ մեծ մասամբ «Կարաբաղին» կամ բժշկության գրքին է վերաբերում, որովհետեւ այս հուշարձանը լրիվ է պահպանված երկու լեզուներով: Եվ վրաց և հայ բժշկագիտության պատմությամբ զբաղվող մասնագետների առաջ այսօր խնդիր է դրված ուսումնասիրել անցյալից մեղ ժառանգություն մնացած բժշկական բնագրերը, որոնց շարքում պատվավոր տեղ են գրավում «կարաբաղինները»: Այսուհետեւ վրացերեն «կարաբաղին» ուսումնասիրողը այդ հուշարձանի օրինակների համեմատության ժամանակ չի կարող աշխաթող անել հայերեն թարգմանությունը, ինչպես և հայերեն թարգմանության ուսումնասիրողը՝ հուշարձանի վրացերեն բնագիրը:

¹ Ակադեմիան նկարագրության համար տես Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջեր 243—253 և 443—444: